ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 26.04.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ
թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/53

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, քննելով «Լիմուշ» ՍՊԸ-ի կողմից 10.04.2018թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/53 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «Լիմուշ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Լիմուշ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 10.04.2018թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ «ՀՀ ԿԱ Ո ԳՀԱՊՁԲ-ՏՊՆՅՈՒԹ/2018/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում 04.04.2018թ. Ընկերության հայտը մերժվել է, քանի որ ՀՀ ՊԵԿ-ին ուղարկված հարցման արդյունքում պարզվել է, որ 27.03.2018թ. դրությամբ «Լիմուշ» ՍՊԸ-ն իբրև թե ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ: Նշված հարկային պարտավորությունները ժամկետանց չեն և իրականությանը չեն համապատասխանում և չեն բխում գործող օրենսդրության տառից: Այն հետևանք է ՊԵԿ ավտոմատացված համակարգի կողմից հարկ վճարողի միասնական հաշվին առկա գումարները ոչ ճիշտ հերթականությամբ հարկերի մարման ուղղելու գործելաոճի,

մասնավորապես, չի պահպանվել Հարկային օրենսգրքի «Անցումային դրույթներ» բաժնի 447-րդ հոդվածի հոդվածի 1-ին մասի պահանջը, որի համաձայն՝ մինչև Օրենսգիրքն ուժի մեջ մտնելը ավարտված հաշվետու ժամանակաշրջաններին վերաբերող հարկային պարտավորությունները 2018 թվականի հունվարի 1-ից հետո դադարած չեն համարվում և ենթակա են կատարման մինչև Օրենսգիրքն ուժի մեջ մտնելը գործող օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով և ժամկետներում:

Մինչև 2018թ. հունվարի 1-ը գործող «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքը, որպես շահութահարկի վճարման պարտավորության վերջնաժամկետ սահմանել է ապրիլի 25-ը, և այդ ժամանակահատվածում գործող օրենսդրությունը հարկային մարմնին պարտադրում էր հարկ վճարողների պարտավորությունները նրանց անձնական քարտերում հաշվեգրել առաջացող հարկային պարտավորության վերջնաժամկետին: Այսինքն, Ընկերության կողմից 2018թ. մարտի 14-ին ներկայացրած 2017թ. շահութահարկի հաշվարկով ինքնահայտարարագրված շահութահարկի գծով հարկային պարտավորությունը պետք է Ընկերության միասնական հաշվից գանձվեր 2018թ. ապրիլի 25-ին, և ոչ թե արտահերթ կարգով հենց մարտին՝ 2018թ. փետրվար ամսվա հարկային պարտավորությունների մարման նպատակով միասնական հաշվին փոխանցված գումարներից: Այս գործելաոճի հետևանքով Ընկերության միասնական հաշվին առկա գումարները չեն բավականացրել ընթացիկ (2018թ. փետրվարին առաջացած) հարկային պարտավորությունների մարման համար, և, որպես հետևանք, դրանք հարկային մարմնի համակարգում դասակարգվել են որպես ժամկետանց:

Միաժամանակ, նման խառնաշփոթ առկա է նաև ԵՏՄ-ից ներմուծված ապրանքների գծով առաջացող հարկային պարտավորությունների գծով, որոնց դեպքում օրենսդրությունը որպես առաջացող հարկային պարտավորություն սահմանում է վճարման վերջնաժամկետ մինչև ներմուծմանը հաջորդող ամսվա 20-ը, սակայն հարկային մարմինը ԵՏՄ ներմուծման հայտարարագրերը էլեկտրոնային համակարգում ամփոփելիս անմիջապես դրանցով առաջացող հարկային պարտավորությունները հաշվեգրում է հարկ վճարողի համար որպես ժամկետանց պարտավորություն:

Սույն գործելաոճի դեմ բողոքելով՝ «Լիմուշ» ՍՊԸ-ն 04.04.2018թ. դիմում է ներկայացրել ՀՀ ԿԱ ՊԵԿ (N 27D3-8863-6942) նշված հարցը շտկելու համար: Որպես հիմք

Ընկերությունը բողոքին կից ներկայացրել է «Լիմուշ» ՍՊԸ-ի հարկային հաշվետվությունները և դրանց օրենքին համապատասխան ժամկետներում մարումները, որտեղ երևում է, որ «Լիմուշ» ՍՊԸ-ն ժամկետանց հարկային պարտավորություններ չունի, ընդհակառակը՝ մշտապես ունեցել է գերավճար:

Ընկերությունը բողոքով և ի լրումն բողոքի 11.04.2018թ. ներկայացված գրությամբ խնդրել է՝

1.«Լիմուշ» ՍՊԸ-ին հաղթող ճանաչել ՀՀ ոստիկանության կողմից հայտարարված «ՀՀ ԿԱ Ո ԳՀԱՊՁԲ-ՏՊՆՅՈՒԹ/2018/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 8-րդ չափաբաժնի մասով և կնքել պայմանագիր:

2. Պարտավորեցնել ՀՀ ոստիկանությանը չմերժել «ՀՀ ԿԱ Ո ԳՀԱՊՁԲ-ՏՊՆՅՈՒԹ/2018/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 8-րդ չափաբաժնի մասով ներկայացված հայտը:

«Լիմուշ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 13.04.2018թ. ժամը 11:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են բողոքով ներկայացված դիրքորոշումը, ինչպես նաև հայտնել, որ մեկշաբաթյա ժամկետում ՀՀ պետական եկամուտների կոմիտե համապատասխան հարցում կներկայացվի ճշտելու համար Ընկերության հարկային պարտավորությունների վերաբերյալ առկա տեղեկատվությունը:

2. ՀՀ ոստիկանության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ ՀՀ ոստիկանության կողմից գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

ՀՀ ոստիկանությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 13.04.2018թ. ժամը 11:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲԽ-ԱՄ-2018/53 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԱՄ-2018/53 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ ոստիկանության կողմից ՀՀ ոստիկանության կարիքների համար պոլիգրաֆիական և տպագրական նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ԿԱ Ո ԳՀԱՊՁԲ-ՏՊՆՅՈՒԹ/2018/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով «Լիմուշ» ՍՊԸ-ն 27.03.2018թ. հայտ է ներկայացրել:

2. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 04.04.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Լիմուշ» ՍՊԸ-ն 27.03.2018թ. դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն ***330 429 ՀՀ դրամի չափով:***

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.04.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Լիմուշ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով «Լիմուշ» ՍՊԸ-ի 10.04.2018թ. բողոքը, «ՀՀ ԿԱ Ո ԳՀԱՊՁԲ-ՏՊՆՅՈՒԹ/2018/10» ծածկագրով ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված

պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: ***Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը***

որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ փվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

ՀՀ ոստիկանության կողմից ՀՀ ոստիկանության կարիքների համար պոլիգրաֆիական և տպագրական նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ԿԱ Ո ԳՀԱՊՁԲ-ՏՊՆՅՈՒԹ/2018/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով «Լիմուշ» ՍՊԸ-ն ***27.03.2018թ.*** հայտ է ներկայացրել:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.03.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Լիմուշ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 8-րդ չափաբաժնի մասով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 29.03.2018թ. ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի հիման վրա համապատասխան հարցում է ներկայացրել ՀՀ պետական եկամուտների կոմիտե Ընկերության՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 04.04.2018թ. տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «Լիմուշ» ՍՊԸ-ն ***<u>27.03.2018թ. դրությամբ՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ, ունի ժամկետանց հարկային պարտավորություն 330 429 ՀՀ դրամի չափով:</u>***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 04.04.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Լիմուշ» ՍՊԸ-ի հայտը մերժել է:

Ընկերությունը ԳԲԽ-ԱՄ-2018/53 բողոքի քննության շրջանակներում հրավիրված նիստի ժամանակ հայտնել է, որ «Լիմուշ» ՍՊԸ-ի մոտ արձանագրված հարկային պարտավորությունները ժամկետանց չեն և միջնորդել է տրամադրել ժամկետ իր դիրքորոշումը հիմնավորող ապացույցներ ներկայացնելու համար:

Արձանագրում եմ, որ սույն որոշումը հրապարակելու օրվա դրությամբ «Լիմուշ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին չեն ներկայացվել Ընկերության դիրքորոշումը հիմնավորող ապացույցներ:

Ընթացակարգի հրավերի 7-րդ կետի 7.15-րդ ենթակետով սահմանվել է, որ Կոմիտեն սույն հրավերի 1-ին մասի 7.13 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին սույն հրավերի 9-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: ***Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:***

Այսպես, գտնում եմ, որ մերժելով «Լիմուշ» ՍՊԸ-ի հայտը, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գործել է իրավաչափ և առաջնորդվել է ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի պահանջներով, քանի որ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների

գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ ունենալու փաստը Կարգի 44-րդ կետի համաձայն, հանդիսանում է մասնակցի հայտը մերժելու հիմք:

«Լիմուշ» ՍՊԸ-ն Ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 2 հավելվածով՝ մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ԿԱ Ո ԳՀԱՊՁԲ-ՏՊՆՅՈՒԹ/2018/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, մինչդեռ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացությամբ արձանագրվել է, որ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ, ինչի հետևանքով Ընկերության ներկայացրած հայտարարությունը որակվել է իրականությանը չհամապատասխանող և Ընկերության հայտը Կարգի 44-րդ կետի և Հրավերի 7-րդ կետի 7.15-րդ ենթակետի հիման վրա մերժվել է:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ «Լիմուշ» ՍՊԸ-ի կողմից 10.04.2018թ. ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Լիմուշ» ՍՊԸ-ի կողմից 10.04.2018թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**